



ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ  
ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆ ՊԼՅՈՒՄ ԱՐԵՎԵԼՅԱՆ  
ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ



ԼՐԱՏՈՒ – ՀԱՅԱՍՏԱՆ – ԱՊՐԻԼԻ 2020 Թ.



[ԲՈԼՈՐ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ](http://www.euwipluseast.eu) <http://www.euwipluseast.eu> > Partner countries > Armenia

## Եվրոպական միության Ջրային նախաձեռնությունն պլյուս (ԵՄՋՆ+) ծրագիրն Արևելյան գործընկերության 6 երկրներում աջակցում է ջրային ռեսուրսների համապարփակ կառավարմանը

### 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ

#### Ավելի հզոր իրավական դաշտ



ազգային մակարդակով՝ ներդաշնակեցնելով ԵՄ Ջրի շրջանակային դիրեկտիվի և բազմակողմանի բնապահպանական համաձայնագրերի հետ



#### Ջրերի կառավարման բարելավված կարողություններ

գետավազանային մակարդակով՝ կառավարման պլանների մշակման և մոնիթորինգի համակարգի բարելավման միջոցով

#### ավելի լայն ընդգրկվածություն



Հանուն ջրային ռեսուրսների ապագայի՝ շահագրգիռ կողմերի և հանրության

<b>ԾԱԳՈՒՄԸ</b>	Եվրոպական միության Արևելյան գործընկերության ծրագիր
<b>€</b>	24.6 միլիոն
<b>ՀԱՄԱ–ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ</b>	Եվրոպական միություն (95%) Ավստրիա, Ֆրանսիա (5%)
<b>4 ՏԱՐԻ</b>	2016 – 2020 թթ.
<b>4 ԳՈՐԾԸՆԿԵՐ</b>	ՏՀԶԿ, ՄԱԿ-ի ԵՏՀ, Ավստրիայի շրջակա միջավայրի գործակալություն, Ֆրիանսիայի ջրերի միջազգային գրասենյակ

## ԵՄՋՆ+ ծրագրի առաջընթացը Հայաստանում

Հայաստանը քայլ է կատարել դեպի ՋՈՒՀԿ բնագավառում Եվրոպական միության օրենսդրություն: Ջրային ոլորտում Հայաստանի և ԵՄ-ի միջև ստորագրված ՀԸԳՀ-ն նպատակ ունի աստիճանաբար ներդաշնակեցնել Հայաստանի ջրային ոլորտի իրավական դաշտը ԵՄ-ի համապատասխան օրենսդրության հետ: ԵՄՋՆ+ ծրագիրն աջակցում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարությանը՝ իրականացնելու ՀԸԳՀ-ով 5 ջրային դիրեկտիվների վերաբերյալ ստանձնած պարտավորությունները: Ներկայումս ընթանում է ճանապարհային քարտեզի իրականացումը, որը ներառում է Ջրային օրենսգրքի փոփոխություններ: Դրանք ներկայումս շրջանառության մեջ են կառավարության գերատեսչություններում: Վերջերս Հայաստանը թարմացրել է «Ջուր և առողջության» արձանագրության շրջանակներում նպատակային թիրախները՝ բարելավելու անվտանգ խմելու ջրի և ջրահեռացման մատչելիությունը բոլոր քաղաքացիների համար: Այս փաթեթը և շրջանառվում է՝ պաշտոնապես ընդունման նպատակով:



**Ջրավազանային մակարդակով, Հայաստանը բարելավել է իր կարողությունները՝** իրականացնելու ջրի մոնիթորինգի դիտացանցի և լաբորատոր ենթակառուցվածքների բարելավման ազգային ռազմավարությունը, այդ թվում նաև ԵՄՋՆ+ ծրագրի շրջանակներում կազմակերպելով համապատասխան անձնակազմի վերապատրաստման դասընթացներ: Ողջ գործընթացը համակարգվել է Սևանի և Հրազդանի ջրավազանային կառավարման պլանների մշակման հետ, որոնք հանդիսանում են պլանավորման և քաղաքականության փաստաթղթեր՝ ուղղված երկարաժամկետ կտրվածքով գետավազաններում ջրային ռեսուրսների կառավարման բարելավմանը: Արդյունքում, Հայաստանն ի վիճակի է **տեղական մակարդակով** իրականացնել **կոնկրետ միջոցառումներ**՝ ավելի արդյունավետ կառավարելու ջրային ռեսուրսները՝ նպատակ ունենալով հասնելու ջրային մարմինների լավ կարգավիճակի:

## ԵՄՋՆ+ ծրագրի վերջին նորությունները Հայաստանում



**Կովկասյան երկրներում գետավազանային կառավարման պլանների վերաբերյալ հանրային խորհրդակցությունների լավագույն փորձի փոխանակում. տարածաշրջանային աշխատաժողով**  
 2020 թ. փետրվարի 27-28

Այս երկօրյա աշխատաժողովը տեղի ունեցավ Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում՝ ԵՄՋՆ+ ծրագրի շրջանակներում: Այն նպատակ ուներ մշակել ուղեցույցեր հանրային խորհրդակցությունների վերաբերյալ՝ մասնակից երկրների փորձի և ԵՄ Ջրի շրջանակային դիրեկտիվի կիրառման լավագույն օրինակների հիման վրա:  
[Մանրամասները՝ ԵՄՋՆ+ ծրագրի կայքէջում](#)



**Շրջակա միջավայրի վերանորոգված լաբորատորիա Հայաստանում. Եվրոպական միությունը տրամադրում է լաբորատոր սարքավորումներ**  
 2020 թ. հունվարի 31

Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոնը այժմ իրականացնում է ջրի ժամանակակից փորձագնումներ, ինչն ակնհայտորեն կիսբանի Հայաստանում ջրերի պահպանությանը: Միջոցառմանը մասնակցում էին Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության ղեկավարը, ՀՀ շրջակա միջավայրի նախարարը, Ավստրիայի և Ֆրանսիայի դեսպանատների ներկայացուցիչներ և այլ բարձրաստիճան պաշտոնյաներ:  
[Մանրամասները՝ ԵՄՋՆ+ ծրագրի կայքէջում](#)



**Հայաստանում ՋՌՀԿ բնագավառում ազգային քաղաքականության երկխոսություն**  
 2019 թ. հոկտեմբերի 15

Ազգային քաղաքականության երկխոսության (ԱՔԵ) ղեկավար հանձնախմբի 18-րդ նիստը քննարկեց ջրային ռեսուրսների կառավարման ոլորտում վերջին տասնամյակում Արևելյան գործընկերության շրջանակներում Հայաստանի արձանագրած առաջընթացը: Ներկայացվեցին ԵՄՋՆ+ ծրագրի շրջանակներում ձեռքբերումները ջրային ոլորտի օրենսդրական բարեփոխումների և ջրավազանային կառավարման պլանավորման ոլորտներում: ՀՀ շրջակա միջավայրի փոխնախարար Իրինա Ղափլանյանը շեշտեց ԱՔԵ միջոլորտային գործընթացի կարևորությունը՝ Հայաստանում ՋՌՀԿ զարգացման գործում:  
[Մանրամասները՝ ԵՄՋՆ+ ծրագրի կայքէջում](#)



### Հայ-վրացական երկկողմանի հանդիպում Խրամի-Դեբեդ գետավազանում համագործակցության վերաբերյալ

2019 թ. հոկտեմբերի 14

ԵՄՁՆ+ ծրագիրն աջակցությամբ կազմակերպեց Հայաստանի և Վրաստանի ջրային ոլորտի մասնագետների միջև երկկողմանի հանդիպում՝ քննարկելու Խրամի-Դեբեդ անդարսահմանային գետավազանում համագործակցության հարցերը: Ջրի որակի մոնիթորինգով զբաղվող տեխնիկական փորձագետները համաձայնեցին համագործակցության հետագա քայլերը՝ ի բարօրություն անդրսահմանային ջրային ռեսուրսների:

[Մանրամասները՝ ԵՄՁՆ+ ծրագրի ֆեյսբուքյան էջում](#)



### Հանրային խորհրդակցությունների առաջին փուլի 2019 թ. հաշվետվություն

Սևանի և Հրազդանի ջրավազաններում հանրային խորհրդակցությունների առաջին փուլը կազմակերպվեց 2019 թ. գարնանը: Մշակվել է հաշվետվություն, որն ամփոփում է խորհրդակցությունների գործընթացը և ստացված կարծիքներն ու մեկնաբանությունները:

[Մանրամասները՝ ԵՄՁՆ+ ծրագրի կայքէջում](#)

### Ջրի մոնիթորինգի համաշխարհային օրը Հայաստանում

2019 թ. սեպտեմբերի 18

Անցյալ ամռանը, Սևանի և Հրազդանի ջրավազանների շուրջ 350 դպրոցականներ օգտագործեցին հատուկ գործիքներ՝ իրականացնելու տարրական մոնիթորինգ մոտակա ջրային մարմիններում: Մոնիթորինգից հետո կազմակերպվեցին մի շարք միջոցառումներ՝ բարձրացնելու բնակչության իրազեկությունը ջրերի պահպանության վերաբերյալ: ԵՄՁՆ+ ծրագրի և ծրագրի գործընկեր Ազգային ջրային համագործակցության միջոցով կազմակերպված այս միջոցառումները հզորացնում են երիտասարդ սերնդի կարողությունները՝ հատկորոշելու և լուծելու ջրին առնչվող մարտահրավերները իրենց համապատասխան համայնքներում:

[Մանրամասները՝ ԵՄՁՆ+ ծրագրի կայքէջում](#)



## ԵՄՁՆ+ ծրագրի պլանավորվող միջոցառումները Հայաստանում

### Տարածաշրջանային միջոցառումներ

- 2020 թ. մարտի 18-20-ին Թբիլիսիում պլանավորված ստորերկրյա ջրերի կարգավիճակի գնահատման տարածաշրջանային (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան) աշխատաժողովը հետաձգվել է՝ պայմանավորված կորոնավիրուսի համաճարակով:
- Հայաստանի և Վրաստանի համատեղ մասնակցությամբ անդրսահմանային դաշտային ուսումնասիրություններ (մակերևութային ջրերի)՝ հավանաբար գարնանը:
- Հիդրոերկրաբանների՝ 2020 թ. մայիսի 4-8-ը Վիեննա պլանավորված ուսումնական ճամփորդությունը՝ մասնակցելու Եվրոպայի երկրաբանական գիտությունների միության (ԵԵԳՄ) կոնֆերանսին, չեղարկվել է՝ պայմանավորված կորոնավիրուսի համաճարակով: Պլանավորված հանդիպումները տեղի կունենան առցանց ռեժիմով:
- Արևելյան գործընկերության, բալկանյան և ԵՄ անդամ երկրներում ջրի հավասարաչափ և կայուն բաշխման և բնապահպանական թողքերի տարածաշրջանային աշխատաժողովը հետաձգվել է մինչև 2020 թ. աշուն:





### Ջրի կառավարման կարողությունների բարելավում

- Ստորերկրյա և մակերևութային ջրերի դաշտային աշխատանքներ, մակերևութային ջրերի մոնիթորինգի և մոնիթորինգի ցանցի բարելավման աշխատաժողովներ՝ հնարավորության սահմաններում գարնանը:
- Ստորերկրյա ջրերի առցանց աշխատաժողով ստորերկրյա ջրերի կարգավիճակի գնահատման վերաբերյալ՝ փոխարինելու Թբիլիսիում պլանավորված տարածաշրջանային աշխատաժողովը, ինչպես նաև ԵԵԳՄ կոնֆերանսին առցանց մասնակցություն:
- Սևանի և Հրազդանի ջրավազանային կառավարման պլանների 2-րդ մասի (տնտեսական վերլուծություն և միջոցառումների ծրագիր) մշակման աշխատանքների ավարտում տեղական ենթակապալառուների կողմից:



### Ներգրավվածության խթանում

- Ջրավազանային կառավարման պլանների (2-րդ մաս) վերաբերյալ հանրային խորհրդակցություններ առցանց ռեժիմով և շահագրգիռ կողմերի հետ մի շարք հանդիպումների միջոցով:
- ԵՄՋՆ+ ծրագրի ավարտական միջոցառումը հավանաբար կկազմակերպվի աշնանը՝ Ազգային քաղաքականության երկխոսության հանդիպման հետ համատեղ՝ նշելու Հայաստանում ծրագրի հիմնական նվաճումները:

## Հավելյալ տեղեկատվություն ԵՄՋՆ+ ծրագրի մասին

<http://www.euwipluseast.eu/>

✉ [contact@euwipluseast.eu](mailto:contact@euwipluseast.eu)



<https://www.facebook.com/euwiplus>

## ԵՄՋՆ+ ծրագրի գործընկերներ

Ծրագիրը համաֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից



Action funded by the EUROPEAN UNION

Իրականացնող գործընկերներ



UNEP



OECD  
BETTER POLICIES FOR BETTER LIVES

ENVIRONMENT  
AGENCY AUSTRIA

umweltbundesamt



International  
Office  
for Water

© 2020 ԵՄՋՆ+ ծրագիր, Բոլոր իրավունքները պահպանված են

*Սույն հրատարակությունը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Դրա բովանդակության համար բացառապես պատասխանատու է Ֆրանսիայի ջրերի միջազգային գրասենյակը և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:*

Իրավական ծանուցումներ